

գինւոյն գոլորշով, կ'ատէր երկուքն ալ: Եւ իւր այդ ներքին կեանքն անատակ կ'ընէր զինք կազմելու այն հաւաքական ինքնապաշտպան ու տիրապետող ոյժը՝ որ անհատական կորովութեանց համախմբութեամբ կը ձեւանայ: Ասոր համար չկըրցաւ փայլիլ նա, ասոր համար չգիտցաւ տիրել, ասոր համար չկըրցաւ պահպանել իւր գոյութիւնն ու երկիրն անգամ: Օրինակները թող խօսին, անոնք աւելի պերճ են եւ համոզիչ:

Արշակ մեծ շահու մը համար օգնութեան գնաց Շապհոյ՝ Յունաց դէմ: Պարսից բանակը դեռ չէր հասած, եւ թշնամին տկար կ'երեւէր: «Տապել սկսան զօրքն Հայոց», կ'ըսէ պատմիչը, եւ կը բռնադատէին թագաւորը թոյլ տալ՝ որ փութան «անձամբք վճարել» պատերազմը, ինչպէս ըրին ալ: Ոչ թէ յաղթանակի ծաւալն էր գանոնք անհամբեր ընող, այլ «զի լաւ հաշուէին զմեռանելն առաւել քան զյամբելն յօտար աշխարհին»: Յոյները պարտեցան, եւ Շապուհ երախտագէտ հոգւով հրաւիրեց զԱրշակ յԱսորեստան՝ վարձատրելու համար Հայոց օժանդակութիւնը: Ճշմարիտ զօրական մը հպարտ սրտով պիտի ընդունէր այդ կոչը. ընդ հակառակն Հայոց զօրքը «տաղտապէին երթալ գհեոի